

ԳԵՐԿԱՍՏԵՆԻ ԱՆԿԱՄՆԵՐԻ ԻՐԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ.

Գիւղական գերդաստանները կազմում են պապին ու տա-
ւը, որդիները, հարսերը, թոռները և թոռնորդիները, բոլո-
րը 2--40 հոգի, որ միասին ապրում են միեւնոյն յարկի տակ
և կառավարւում միեւնոյն շահերով:

Գերդաստանի անգամներին միմեանց հետ կապողն է.

ա. Պարագմունքը. երկրագործութիւնն պահանջում է
շատ աշխատող ձեռքեր, ուստի և գերդաստանից բաժանուելիս
էլ ուրիշ ընտանիքների հետ միացած են գործում, բ. սովո-
րութիւնն ու հասարակաց կարծիքը—չաւ որ բլլիք՝ չէր բաժ-
նուի, նախատելով ասում են բաժանուածների համար, գ.
ազգակցութիւնը, սէրը. գ. կալուածքի միութիւնը և ալլն:

Գերդաստանի իշխանութիւնը պատկանում է տան ամե-
նամեծներին՝ հօրը (պապ) և մօրը (տատ): Հայրը քանի խե-
լահաս է, անսահման իրաւունք ունի կառավարելու գերդաս-
տանի արտաքին գործերը, առանց մեծ որդու յօժարութիւնն
առնելու կամ խորհուրդ հարցնելու. նա անսահման իշխանու-
թիւն ունի որդիներին՝ ւժախելու և գինն ուտելու—հետեա-
պէս և նրանց վաստակը լիովին իրեն է պատկանում: Փողը
և աշխատանքի բաժանումը իւր ձեռքն է: Որդիներն իրա-
ւունք չունին իրենց վաստակը իրենց մօտ պահելու, իրենց
վաստակով իրենց մի բան գնելու, կամ տաւնց հօրից իրա-
ւունք խնդրելու՝ մի գործ կատարելու:

Այս անսահման իշխանութիւնն այժմ հեռզհեռէ պակա-
սում է և որդիներն այժմ այնպէս հլու հպատակ չեն հօրը՝
ինչպէս առաջ: Ուստի ժողովուրդը գանգատւում է. շէմիկուայ
աղաքը թոխմախը իրենց մարերուն, հարերուն հակտին զար-
նեն կը:

Գերդաստանի ներքին կառավարութիւնը կեդրոնանում է
մօր ձեռքում: Մայրն անսահման իշխանութեամբ կառավա-
րում է տան գործերը և հրամայում հարսերին: Նրա ձեռին
է տան բոլոր բարիքների բանալիները, նա է հարսերին հը-
րամայողը և աշխատանք բաժանողը: Առանց նրա թոյլատ-

ւութեան ոչ մի հարս չի կարող բանալին վերցնել և մի պատառ հաց անգամ հանել, առանց նրա թողալութեան հարսըն իրաւունք չունի ուրիշի տուն գնալու:

Հօր և մօր անձնափոխանորդներ համարում են աւագ որդին և նրա կինը՝ աւագ հարսը, որոնք և առաջիններին ժաշկից լետայ, լիսկին ժառանգում են այդ իրաւունքները: Նոյն իրաւունքներով օգտւում են սրանք և այն ժամանակ, երբ հայրը և մայրը ներանում կամ հոգեկան հիւանդութիւն են ստանում: Հայրն իշխանութիւնն աւագ որդուն լանձնելիս՝ կանչում է բոլորին իւր շուրջը, որհնում և շնորհակալ լինելով որ այդքան ժամանակ իրեն հնազանդ են եղել, յայնում է որ իւր իշխանութիւնն լանձնում է մեծ որդուն և պատուիրում է բոլորին հնազանդուիլ նրան ինչպէս իրեն: Ապա լուանում է ձեռքերը յաջորդի ձեռքերի վերայ, սրով և իւր ձեռքերի շարաքեւթըն անցնում է նրա ձեռքերին, լետայ լանձնում է նրան փողի քսակը և համբարում:

Եթէ աւագ որդին հոգեկան հիւանդութիւն ունենայ, հայրը գրկում է նրան յաջորդութեան իրաւունքից և յաջորդութիւնն անցնում է միւս եղբորը, հակառակ գէպքում՝ հայրը չի կարող գրկել նրան:

Որդու յաջորդութեան ժամանակ՝ տան մեծին իրաւունքը փոքր ինչ սահմանափակւում է, նա ծանր գործերում պէտք է խորհրդակցէ չափազաս եղբայրների հետ և ստանայ նրանց համաձայնութիւնը: Նա պէտք է զգուշանայ իւր անձնականին վերաբերեալ ծախսերից, որովհետեւ սրանից ոչ միայն կռիւներ են ծագում, այլ և միւս եղբայրներից իւրաքանչիւրը պահանջում է նոյնպիսի ծախս և իւր համար անել: Սակայն սրա իրաւունքը ևս տարածւում է բոլոր անդամներին, բացի հարսերից, թէ անշարժ և թէ շարժական կայքերի վերայ: Օր. եթէ անդամներից մինը, տան մեծի եղբայրը թէ որդին՝ միևնոյն է, տանից մի հաց առել գնացել է օտար երկիր և հազար ժանէթ վաստակել, այդ գերգաստանինն է, և նա պարտաւոր է լանձնել տան մեծին: Իսկ եթէ հազար մանէթ պարտք է արել, այդ պարտքն էլ պիտի վճարէ գերգաստանը՝ տան մեծի ձեռքով:

Տան մեծի անձնափոխանորդը և նրա մահից յետոյ նրա յաջորդը՝ է ոչ թէ նրա աւագ որդին՝ այլ իրենից փոքր եղբայրը, այսինքն տան միջի տարիքով մեծը՝ յետոյ փոքր եղբայրը: Բոլոր եղբայրներից յետոյ յաջորդութիւնն անցնում է աւագ եղբոր երեց որդուն: Այսպէս ուրեմն՝ յաջորդութիւնը կատարւում է երեցութեան կարգով, և այս ինչպէս արական, այնպէս էլ իգական սեռի մէջ:

Միակ բանը, ինչպէս ասացինք, որի վրայ չի տարածւում տան մեծի իշխանութիւնը, դա Հարսերի փոշն է: Թէև Հարսերը իրենց Հեռ փող չեն բերում, սակայն վաճառում են իրենց զարդերը, հագուստները և խնամոնց տուած սփռնեքը մանրելով մի գումար են գոյացնում և իրենց անունով շահով տալիս: Այս գումարը իրենք կուում են տարնջազինա՝ արեան գին և այդ փողով հողում իրենց և իրենց որդիների հագուստները, որովհետև կերսանքը շոր չեն անում ոչ իրեն և ոչ իւր որդիներին: Եթէ պատահի, որ կերսանքը շոր տնեն մի հարսին, անպատճառ միւսներին էլ պէտք է տնեն, չնայելով որ նրանք բոլորովին պէտք չունին: Եւ եթէ յանեն, ամուսինները կը կռուեն և կը բաժանուին: Եթէ մի քանի արշին կտոր գայ տուն, անպատճառ հաւասար բաժին պիտի տնեն Հարսերի մէջ, առանց նայելու՝ թէ այս Հարսը շատ, իսկ այն ոչ մի որդի չունի, և կամ որան շատ հարկաւոր, իսկ նրան բոլորովին անպէտք է: Այս է պատճառը, որ միևնոյն գերգաստանի երեխաներից մի քանիսը շատ լաւ են հազնուած, իսկ միւսները գրեթէ մերկ են:

Կնոջ փողի վրայ իրաւունք չունի և նրա ամուսինը, եթէ բաժան չէ եղբայրներից: Բաժանուելիս միայն նա ստանում է կնոջ փողը և վարւում ինչպէս իւր վաստակի հետ:

Կնոջ մահից յետոյ արնգինը մնում է մարդուն որպէս մի առանձին սեպհականութիւն, որի վերայ իրաւունք չունի տան ոչ մի անդամը: Այս փողով նա կարող է հոգալ իւր անձնական և իւր որդիների կարիքը: Սրա մահից յետոյ արնգինը որպէս ժառանգութիւն բաժանւում է որդիներին երկուս աղաներին և մէկ աղբիկներին, որպէս առանձին սեպհականութիւն:

Համամայր որդիները միևնոյն իրաւունքն ունին արնագնի ժառանգութեան, իսկ Համահայր որդիներից իւրաքանչիւրը միևնոյն իրաւունքն ունի միայն իւր Հաբազատ մօր արնագնի վերայ:

Կնոջ Հետը բերած աղան ստանում է մօր ունեցած արնագինը, իրեն է պահում իւր վաստակը, և միայն կերակրում խորթ Հօր սեզանից: Ապօրինի, պասկից առաջ ծնուած երեխաներն անպատճառ կամ սպանւում են և կամ եկեղեցու դուռն ձգւում: Մինչև անգամ ամուսնութիւնից մի քանի ամիս յետոյ ծնուածներն ենթարկւում են այդ գծբախտ վիճակին: Օր. Սաթիսա գիւղում ամուսնութիւնից չորս ամիս յետոյ ծնւում է աղայ, որ Հակառակ մօր օրտակէջ աղայանքին և Հօր թոյլ ընդգիծութեան, խեղդում են տան լամօթի Համար մեռածն մեծերը: Սակայն Հասարակութիւնն անխնամ չի թողնում եկեղեցու դուռը ձգուածներին: Որքան արհամարում է ապօրինի երեխայի թագնուած ծնողներին, այնքան գութ ունի երեխայի վրայ: Անշուշտ մի գերդաստան, տան երկու մեծերի, մանաւանդ կերսարի, թոյլութիւնով որդեգրում է և Հաբազատ որդիներէ Հետ Համահաւասար խնամում:

Որդեգիր որդին ժառանգութեան իրաւունք ունի միայն որդեգրողի շարժական կայքի վրայ. իսկ եթէ որդեգրողը կըտակ անէ՝ կորող է Հաբազատ որդիների Հաւասար, մինչև անգամ աւելի, մասն ստանալ:

Տնփեսայութիւն շատ քիչ է պատահում և այն միայն այն դէպքում, երբ աղջկայ Հայրը ոչ միայն արու զաւակ չունի, այլ և բաժանուած է գերդաստանից: Տնփեսան վայելում է Հաբազատ որդու իրաւունքներն և աներոջ մահից յետոյ ժառանգում նրա թէ անշարժ և թէ շարժական կայքն:

Բացայայտ նկատւում է, որ բաժնուիրը ՀետըՀետէ աւելանում է և այս կատարւում է Հետեւեալ ձևով.

Ա. Որդին քաժանում է հօրից.

Երբ որդին է բաժանւում հօրից, վերցնում է ինչ որ Հայրը տալիս է և հեռանում: Յաճախ պատահում է, որ որ-

գու. վերայ բարկացած Հայրն ոչինչ չի տալիս նրան — ակնիկը կու տայ մեռքը գուս կէնէն: Սակայն առ հօր մահից յետոյ գատ է բաց անում եղբայրների գէմ և Հաւասար մասն ստանում, և ժողովուրդը բռնորովին չի գատապարտում նրան:

Բ. Եղբայրներն են բաժանում.

Եղբայրները բաժանուելիս՝ նախ և առաջ ընտրում են 3—4 բաժանող, որոնք մաքրում են Հաշիւները, և ինչպէս առ մեռն փողը, այնպէս էլ պարտքը բաժանում եղբայրների վերայ: Եթէ եղբայրների որդիներից մինը կամ մի քանիսն ամուսնացած են, նախսերը Հաշոււմ և այգքան փող ընդՀանուր գումարից տալիս են այն եղբորը՝ որի որդին գնու չէ ամուսնացել: Ապա ցորենն ու յարգը գերդաստանի բոլոր անդամների, իսկ շարժական և անշարժ կալուածները միայն եղբայրների թուին Հաւասար մաս են անում, առանց նախելութէ մի եղբայրը տասն որդի ունի, իսկ միւսը ոչ մինը, կամ մեծ եղբոր 25—30 տարեկան որդու 15—20 տարիների վաստակը խառնուած է այդ բաժանուող սեպՀանութեան մէջ: Բաժանումից ազատ է մնում միայն կանանց տնտեսները—Հանգերները, զարգերը և արնագները: Հաւասար մասեր անելուց յետոյ, բաժանողները զինակ (չոփ) են ձգում և որ մասը ում ընկաւ՝ տալիս նրան: Բաժանուածները սովորաբար մօտ մի տարի խռով են մնում, յետոյ Հաշուում և առաջուանից աւելի սիրով լինում:

Բաժանման ամենազլխաւոր պատճառներն են.

ա. Սովորութիւնների գեղծումը. 40—50 հօգի միասին կարող են միայն այն ժամանակ խաղաղ ապրել, երբ բոլորն էլ նախաշում են իրենց պարտքն ու իրաւունքն և բոլորն էլ ենթարկուում են որոշ օրէնքների: Նախկին Հայ գերդաստանըն արդէն լաւ թէ վատ որոշել է իւրաքանչիւր անգամի իրաւունքն ու պարտականութիւնը և սահմանել է որոշ սովորութիւններ, որոնք իբրեւ օրէնք կատարուում էին: Արդի սերունդն անարգելով նախնի իրաւունքն ու սովորութիւնները, մի նոր իրաւունքի կամ սովորութեան չի ենթարկուում, որից և նագում է խռովութիւն, անբաւականութիւն և վերջը բա-

ժամումն: Այսպէս որ, նախնի սովորութիւնը բաժանել է հարսերի աշխատանքը. աղջիկը գեռ հարս չգնացած՝ գիտէ իւր անելիքը և երբ ամուսնանում է՝ արդէն հաշտուած իւր բաղդի հետ, լսելեան կատարում է իւր զործը, իսկ այժմ, երբ հարսերը չեն ուզում վարուել նախնի սովորութիւնով, գործը երեսի վրայ է մնում, մեծն ստիպւում է տեսլ, հրամայել անելու, սա գիմազարձութիւն է անում, որից և ծագում է կռիւ, վերջը բաժանում:

բ. Գլխաւոր պատճառը հոգի սակաւութիւնն է, այնպէս որ իւրաքանչիւր եղբայր առանձնապէս կարող է մշակել իւր բաժին հողը, հետևապէս և եղբոր ընկերութեանը պէտք չունի:

գ. Հող քիչ ունենալով՝ եղբայրներից մի քանիսը մշակութիւն են անում, կամ ուրիշ զործով պարտաւում և չեն ուզում իրենց վաստակը տուն բերել:

դ. Եղբոր չափահաս որդիների աշխատանքն ընդհանուրին է պատկանում և անշապաղ յանձնւում է տան մեծին, սակայն սա զրկուած է ժառանգութեան իրաւունքից. 20—30 տարի աշխատող որդու հայր եղբայրը՝ հաւասար բաժին է առնում զույցէ 15 տարեկան եղբոր հետ:

ե. Փողը մեծ եղբոր ձեռին լինելով՝ սա երբեմն վատնում է իւր անձնականի համար, երբեմն զոգանում, ծածուկ պահում (ինչպէս Դելիֆում պատահել է). Յաճախ էլ գիր չը գիտնալու պատճառով ելեմտից հաշիւը չկարողանալով ճիշտ ցոյց տալ, կասկածանքի տեղիք է տալիս, որից և ծագում է խռովութիւններ և վերջը բաժանումն:

զ. Եղբայրներից մի քանիսը շատ որդիներ են ունենում և միւսները չեն յոժարում հաւասար աշխատել, քանի որ միւս եղբոր որդիները շատ են ուտում:

է. Եղբայրներից մի քանիսը փոքր կամ բոլորովին որդի չունենալով՝ չեն կամենում մասնակցել միւս եղբայրների որդիների հարսանիքի ծախքերին և մի պատճառ բռնելով՝ բաժանւում են:

ը. Եթէ եղբայրներից միին աղջիկը փախցնեն, սա միւս

եղբայրներից պահանջում է նրանց աղջիկներին ամուսնութեան համար նախաժեղ գումարի լափ գումար, կամ իւր աղջկան համար շորեր առնել տալու և կամ ուղղակի նրա անուամբ շահով տալու և երբ եղբայրները չեն համաձայնում, կուռում և բաժանում են:

Թ. Նրբ եղբայրները իրենց վաստակից փող են գողանում և տալիս իրենց կանանց, որոնք արնքազնի հետ խառնելով շահեցնում են:

Ժ. Ամուսինն երբեք իրաւունք չունի իւր կնոջ կամ որդիներին համար բան առնելու, ի՞նչ մի արշին չի՞թ անգամ դալ տուն՝ հաւատար բաժին պիտի լինի հարսերի մէջ. այս պատճառով և շատ որդիներ ունեցողի ընտանիքը գրեթէ մերկ և խեղճ է ապրում, մինչդեռ դրա աշխատանքի գուցէ մեծ մասով եղբոր որդիներն զարգարւում են: Ցանկանալով իւր որդիներին պահել ինչպէս իւր միջոցները ներում են, բաժանում է:

Ժա. Եթէ եղբայրները յաժար չեն ամուսնացնելու եղբոր որդուն այս ինչ աղջկալ հետ՝ բաժանում են:

Ժբ. Եթէ հարսերը միմեանցից սակիներ են գողանում:

Ժգ. Եթէ տեղերկնիկները միմեանց հետ սիրով չեն և շարունակ կուռում են: Ժողովուրդը բաժանման գլխաւոր պատճառը տեղերկնիկների անհամաձայնութիւնն է համարում:

Ժդ. Եթէ կեսուրը խորթ է և նեղում է խորթ որդիներին և հարսերին:

Ժե. Եթէ մի եղբոր կնոջ արնագինը մեծ է, սա վատահանալով առանձին գործ սկսել կնոջ փողով, բաժնւում է:

Ժզ. Եթէ եղբորորդիներից մինն անառակ է և գողանում է տան իրերը:

Ժզ. Եթէ եղբայրներից մինը ծուլ և անառակ է:

Ընդհանրապէս Ժողովուրդը բաժանուիլը աւերիչ է համարում: Մէթնդիրը երկուս զրկի, մէխարնը երկուս կըզառնայ: ասում է նա: Բաժանուելիս ազապ քրոջը մաս չեն հանում, նա ապրում է եղբայրներից մինի մօտ և ամուսնանում նշանածից առած հագեմասով—սիրեն մուրը իրեն ճակատը ա-

սում է ժողովուրդն այսպիսի զէպքերում: Բաժանուելիս եթէ ծնողները կամ միայն հայրն կենդանի է, առ իրեն բաժին վերցնում է որքան կամենում է, որը սրա մահից յետոյ գարնեալ բաժանում է եղբայրների մէջ, եթէ իհարկէ առանձին է ապրել, իսկ եթէ մի որդու մօտ է ապրում, մնում է նրան: Եթէ կենդանի է միայն մայրը՝ նրան մօտ չեն հանում, շատ շատ մի կով, երկու ոչխար ապրիս են այն եղբորը, որի մօտ մնալու է մայրը:

ՀԻՆԱՅԻՆԹԻՆ ԵՆ ԲԺՅԱԻՆԹԻՆ.

Ախալքալաքի գաւառը Կովկասի ամենաառողջարար գաւառներից մին է համարւում: Մաքուր ու փոշուց ազատ օդն և արագ շնչելու կարևորութիւնը շատ լաւ է ազդում թէ առողջների և թէ հիւանդների վրայ: Շատ օրինակներ ցոյց են տուել, որ ժանտաջերմ (Malaria), ջրդրուկ, թոքային և սակաւարիւն հիւանդութիւններից ամենջուղներն այստեղ արագութեամբ լաւանում են:

Բնակիչների մէջ տարածուած հիւանդութիւնների մեծ մասը յառաջանում է զլխաւորապէս ապրելու եղանակից և ազիտութիւնից: Եւ միայն շատ փոքր մասը կարելի է վերագրել կլիմայի ազդեցութեան, աշխատութեան պայմաններին, ժառանգութեան և պատահական զէպքերին:

Գիւղացիների բնակարանները, որ գրեթէ բոլորովին զբրկուած են լուսից և պարունակում են անասունների զեքից շոգիացած գազեր ու մեծ քանակութեամբ անխաթիւ, տհաճին ազդեցութիւն ունին բնակիչների առողջութեան վրայ: Բացի թթուածնի պակասութիւնից յառաջացած գնատները, այդ խոնաւ, գետնափոք բնակարանները սաստիկ նպաստում են հազար ու մէկ մանր օրգանիզմների յառաջացման:

Աերջին խօշերայի ժամանակ այս գաւառում անհամեմատ քիչ զօհեր եղան, իսկ հինգ տարիների ընթացքում սո-